ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏԻ 2021թվականի N 20-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ,ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի19-ի N 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<Մոդուլ>> ՍՊԸ-ի միջև կնքված No ՏԿԵՆ-ՀԲՄ-ԽԾԲ-2020/1Ն պայմանագիրը և <<Մոդուլ>> ՍՊԻ տնօրեն Ն.Հակոբյանի /մուտք՝ 02.03.2021թ. թիվ 163 / գրությունը՝

որոշում եմ.

Բավարարել <<Մոդուլ>> ՍՊԸ-ի տնօրեն Ն.Հակոբյանի գրության պահանջները և տրամադրել նախագծման թույլտվություն /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ համայնքի վարչական տարածքում գտնվող մարզային և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքները իրականացնելու համար համաձայն՝ հավելված 1-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. մարտի 3
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2021թվականի N 21-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կադաստրի կոմիտեի վկայականը՝ 1447164 հաստ. 30.06.2004թ.և քաղաքացի Սարգիս Արամայիսի Մանուկյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Քաղաքացի Սարգիս Արամայիսի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Թումանյան քաղաքի բնակելի տանը (06-004-032-000002-001)մակերեսի չափը՝ 53,1 քմ և 0,0567 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,14-րդ փողոց, տուն 1:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. մարտի 5
ք.Թումանյան